

82
8-16.

910

млн.гр.
мл.р-



ՆԱՐ ԲԻՆՔԵՐՓԼԵՆ

ԱՄԵՐԻԿԱՑԻ ՀՈԶԱԿԱՀՈՐ ԳԱՂՏԻ
ՈՍՏԻԿԱՆԻՆ ՆՈՐ ԱՐԿԱԾՆԵՐԸ

ԹԱՐԴՄ. Ժ. Շ.

ԹԻՒ 13

ՀՈՏԱՌՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ



Եթ այս տեսարանը ներկայացնեցաւ Միլրօն իր արդուեն ել-
նելով նիչ մը ուղծողից, մինչ ոսթիկանը ձեռքը անու ուսերուն
վրայ դրած էւ:

ՀՈՏՍԱՌՈՒԹԵԱՆ ՑԱՂԹԱՆԱԿԸ

ԱՆՁՆԱՍՊԱՆՇԻԹԻՆ ԹԷ ՈՃԻՐ

Օդոսասսի այդ ազուոր և առքուկ յետ-մրջօրէին, կաւ
պոյտ երկինքը կը փայլէր իր բոլոր չքիղութիւնովը :

Արեւը իր ջերմիկ ճառագայթները կ'արձակէր կանաչ
ջուրերուն վրայ Հրասքնի, որ երեւակայելի ամէնէն ճոխ,
ամէնէն խիտ և ամէնէն ավանածոյ ու գեղագուարձ բու-
ռախանութեան մը մէջէն կը գալարուի օձապայտ :

Մարգագետիններն ու դաշտերը իրենց բովանդակ չքի-
շութիւնը կը ցուցագրէին կապուտակ երկինքին ներքեւ :

Գիւղացինները հողացին դանազան աշխատութիւններով
կ'զբաղէին գործունէութեամբ :

Բայց գեղեցկօրէն յարգարուած ճամբաններուն վրայ սա-
կաւաթիւ շրջագայողներ կ'երեւէին տօթագին ջերմութեան
պատճառաւ :

Ալգանի քաղաքին մօտ, հոն՝ ուր գեալ կոր զի՞ծ մը կը
քաշէ լայնօրէն, կանաչներու մէջ, կյերեւար սիրուն տնակ
մը, որուն ամբողջովին ճերմակ ներկուած պատերը, վանդա-
կալիեղկերը և պատշգամները թարմութեան և դուարթու-
թեան հաճելի տպաւորութիւն մը կ'ընէին :

Փայտէ երկար կամրջակ մը ջուրին եղերքին կը կապէր
զայն և քանի մը մէզր կ'երկննար, իբր նաւամատոյց ծաւ-
ուայելով զանազան ձեւ ու մեծութիւն ունեցող քանի մը
նաւերու, որ հոն խարսխած էին :

Նշանատախտակ մը, որուն վրայ խոշոր սեւ գիրերով
ովարձու նաւակներ» գրուած էր, կ'իմացնէր շրջագայողնե-
րուն թէ կրնացին չափաւոր գնով մը այնտեղ նառակ մը
գանել, գետին վրայ զրօռական պայտ մը կամ ձկնորսու-
թիւն մը ընելու համար :

Մեր պատմութեան սկսած օրը, մարդ մը սիրուն պղամիկ
տան պատին կը թնած էր :

Գիրուկ, խոշոր ու կարծահատակ ծերունի մըն էր, գե-

զեցիկ գոյնով, երկար մաղերով և ամբողջովին ճերմուկ մօրուքով :

Իր արխանային կաղմուածքը և իր կապոյա, պայծառ ու վառվուն աչքերը ոյժը և առողջութիւնը կը ցուցնէին :

Կարծ «քիքո» մը կը ծխէր փիլսոփայօրէն և «Եանքի Տուալ» մողավրդական երգը կը մոլտար: Յանկարծ, աչքերը դիմուածաբար վեր առնելով, դիմէն իր անակը երկարող նեղ արահետին վրայ տեսու կին մը, որ կը յառաջանար յամբ և չափուած ձեւուած քայլերով :

Հազիւ հարիւր քայլ հեռու էր մարդուկէն, որ ցած ձայնով ըստա:

— Առուուած իմ, ինչ միրուն է:

Սրդարեւ միրուն և կարելի եղածին չափ հրապուրիշ էր իր ըարձր ու նրբին հասակով, իր չնորհալի քալուածքով, վարդ այսեր և մութ զոյն շափուղայէ աչքեր ունեցող իր գեղեցիկ դէմքով և կարմիր պղինձի զոյն իր երկար մազով, որ թիթիէնի պերձաշուր նկարները կը յիշեցնէր: Յարգանք և հիացում կը ներչնչէր ամէնուն:

Ծերունին, տեսնելով որ անիկա տաւնին կը մօսենար, առկաւին ծխացող «քիքո»ն բերնէն վար տուու իսկոյն և գրիսարկը հանեց յարգալից շարժումով մը:

— Բարփ լոյս, ըստա կինը ներդաշնակ ձայնով մը, ի պատասխան ծերուկին բարեւին: Այս տունին աէրն էր, այնուկո չէ:

— Այս, աի'կին, թոթովից: Անոնս թիէռ Մարլ է և ձեզի ծառայերու պատրաստ ...

— Պարսն մը չեկա՞ւ այստեղ:

— Այսօր, տի'կին:

— Այս, քիչ մը առաջ ... Պարսն մը Օր, Տօլի Տօլրնը չարցո՞ւց:

— Ո՛չ, Օրիորդ, հոս անանկ մարդ չեկաւ:

Կինը գլուխը երեցուց դժուն դէմքով մը և եկոծ կողմը նայեցաւ: Բայց մէկը չէր երեւար:

— Զէք ու զեկը քիչ մը նոսիլ, հարցուց ծերունի Մարլ հրապուրիչ շեշտով մը: Այդ պարոնը թերեւո հիմակ ուր որ է կուգայ:

— Անշուշա պիտի զայ, պատասխանեց կինը հաստա-

տուն չեշտով մը: Միայն թէ չեմ ուզեր հոս սպասել իրեն: Նաւակ մը տուէք ինծիք: Գետն ի վեր պիտի ելլեւմ քիչ մը և պարոնը ուրիշ նաւակով մը պիտի զայ զանե զիս, երբ իրեն բաէք թէ հոսկէ մեկնած եմ:

— Ճատ զիւրին է, Օրիորդ:

Ծերունին ջուրին եղերքը, մինչեւ կամրջակին ծայրը գնաց, նաւակներէն մէկուն թիերը տեղը դրաւ և զայն եղերքին կաստղ չվթան քակեց: Կինը, որ քրեն հետեւած էր, թեթեւակի ցատկեց նաւակին մէջտեղը և նստաւ: Վարձու տառողը ուրիշ հրեց նաւակը մինչեւ հոսանքին մէջ զետակին, որ այդ տեղը լայն չէ:

Ծերունին հաճոյքով հաստատեց թիավար կնոջ ճարտարութիւնը և կորով և աչքով հետեւեցաւ անոր մինչեւ որ գետին զոր գիծին տուջեւ, եղերքները ծածկող մացաներուն ետեւ անհետացաւ: Յետոյ իր տունին դրան տուջեւ եկաւ ուորէն և «քիքո»ն վատեց:

Ետքը, աթոռի մը վրայ նստաւ, պատին ստուերին մէջ, ուսկաւաթիւ անցորդները դիտելով ճամբուն վրայ, զար արեւին ճառապայլթները կ'ողողէին:

Հազիւ կէս ժամէ ի վեր հնն էր, երբ երկու մարդիկ տեսնելեցան և ուզողուեցան դէպ իրեն:

Մարլ անոնցմէ մին կը ճանչնար կատարելապէս: Օ՛Նէյլ, անունով իրանտացի մըն էր, մօտերը գանուած մէծ տպարակի մը տէրը և տունին տեսական յաճախորդը: Միւսը անուպես, անմօրուս մարդ մըն էր, հուժկու երեւոյթով, որուն խորապէս չեշտուած գիծերով դէմքը և դրշագոյն ու քիչ մը խիստ աչքերը կը յայսնէին կորովի և ուժեղ նկարագիրը:

— Բարեւ, ծերունի Բիէռս, ըստ Օ՛Նէյլ երկու բաց ձեռքերը երկնցնելով նաւակներ վարձու տառողին: Նստակի մը պէտք ունիմ այս հաւատարիմ բարեկամն քաղաք տանեւու համար: Հոնկէ կ'ուզէ նիւ Եօրք դառնալ ճեպընթացավ:

Ծերունին շրթունքին ծայրով ժամանեցաւ և իր յաճախորդին ձեսքը սեղմեց: Յետոյ, խօսքը ուզողելով իրանտացին լնկերացով պարոնին, ըստ:

— Անշուշա կը ցաւիք այս տեղէն մեկնելնուզ համար, պարոն, վասնովի գիտեմ թէ Մը. Օ՛Նէյլի ազարակին մէջ ամէն ոք սիրապիր ասսինջականութիւն մը և կատարեալ հանդիսա կը զանե:

— Շատ ճիշտ է բռածնիդ, պատասխանեց օտարականը : Եթէ պաշտօնս ներկր երկու օրէ աւելի բացակայիլ, ուրախ պիտի ըլլայի տակաւին ժամանակ մը միալով բարեկամիր մօս : Բայց պարտականութիւնը կը կանչէ զիս : Աղջ զիտէ թէ ի՞նչ դժուարին գործեր, ի՞նչ ուշագրաւ զրավումներ պիտի զտնեմ վերադարձիս : Ամէն պարագայի մէջ շուտով պիտի դամ նորէն, վասնզի համգառութեան այս շրջանը շատ օգտակար եղաւ ինձի և երբեք պիտի չմոռնամ այսոնի անցուցած աղուոր ժամերու :

Օ՛ Նէյլ իր բարեկամը անմիջապէս ներկայացուց ծերունի Մարդի, որ ես ես զնաց և զլիարկը հանեց աւելի յարդանքով և խանդավառութեամբ, եթէ կարելի է, քան երբ տեսած էր այժմ Հրասընի վրայ նաւարկող կնոջ դէպ իրեն դալը :

Արդարեւ ազարականէրին բարեկամը հոչակաւոր գաղտնի ոստիկան նախ Փինքէրթընն էր : Ասենոք մեծ ծառայութիւն մը մատուցած էր Օ՛ Նէյլի, ազատելով զայն գողերու ձեռքէն, որոնք զինքը մեռցնել և զբանները յափշտակել կ'ուղէին :

Այս ծառայութեան պատճառաւ Փինքէրթըն բարեկամը եղած էր աղնու իրանասացիին :

Այս վերջինը շատոնց կը ինգրէր որ Փինքէրթըն դար և ժամանակ մը հիւր ըլլար իրեն և գաղտնի ոստիկանը 2—3 օրուան հանդիսաէ մը օգտուած էր, այս փափաքին պատասխանելու համար :

Ամենաջերմ մտերմութեամբ և ամենանկեղծ սիրով ընդուռուած էր Օ՛ Նէյլ ընամնիքին կողմէ և շատ դոն մնացած էր այս պարզ ու բարի մարդոց մօս իր կարծառեւ բնակութենէն :

Միայն թէ Փինքէրթըն լափիկով գործունէութիւնով մը օգտուած էր և իր արհետան վտանգաւոր իրադարձութիւնները իր բովանդակ ուշագրաւթիւնը կը զրաւէին : Թէ իւ կրնար բացարձակապէս վասահիլ նիւ Եօրք ձգած իր երկու օվնականներուն՝ Բոլ Բէրիէի և Մօրիլնի վրայ և զիտէր թէ ի հարկին անմիջապէս հեռագիր մը պիտի ստանար մէկէն կամ միւսէն, բայց դարձեալ չեր կրնար հանգիստ ըլլալ երբ հեռանար նիւ Եօրքէն, ուր կը կարծէր թէ անհրաժեշտ էր չը ներկայութիւնը : Աւսուի իրանասացիին և անոր ընտանի-

քին սիրուն թախանձանքին հակառակ, որուած էր կարելի եղածին չափ շուտ դառնալ մեծ քաղաքը :

Մարդ արգէն քակած էր նաւակը եղերքին կապող պարմար : Օ՛ Նէյլ վերջին ճիզ մը փորձեց :

— Ուրեմն խիստ անհրաժեշտ է որ բաժնուիք մեզմէ, Մր. Փինքէրթըն, բսաւ : Զէ՞ք կրնար օր մը եւս մեալ :

Փինքէրթըն գլուխը երեցցաց :

— Ո՛չ, բացարձակապէս պէտք է որ երթամ, պատասխանեց : Նիւ Եօրքի մէջ առանց ինձի գործերը լաւ ընթացք չեն առներ : Եավագացումն կ'ըսէ ինձի թէ կարենոր գործ մը պիտի անհնամ և ես թիչ անդամ կը սիսալիմ : Գիտէք թէ նախզգացումի այս ձիրքը ձշմարխա գաղտնի ոստիկանի մը յատկութիւններուն մաս կը կազմէ : Եւ գործերը շատ անգամ կը պատահի ա'յնպիսի յանկարծական կերպով մը, որ շատ փափաքելի է հնա գտնուելու, ամէն պատահականութեան առջեւ պատրաստ զանուելու համար :

Խօսկով մէկակել գաղտնի ոստիկանը գետինակողմը կը զիտէր :

Դէմքը յանկարծ բուռն հեռաքրքրութեան արսայացաւութիւն մը առաւ և զգտուեցաւ, — եթէ կարելի է այսպէս բահել, — զէպի Հրասընի կոր գիծը : Օ՛ Նէյլ և Բիէս Մարդ անոր ակնարկին կողմը նայեցան, բայց մասնաւոր բան մը չսկսան :

— Բաէք, Մր. Մարդ, հարցուց Փինքէրթըն ծերանիին, հնան, Հրասընի վերնակողմը, կոր գիծին հախն ալ նաւակներ վարձու առաւող կա՞յ :

— Ո՛չ, բսաւ ծերունին գլուխը երեցնելով : Գոնէ 30 մզոն հեռաւորութիւնէ ասդիմն այդպիսի բան մը չկայ :

— Այս առաւու նաւակ մը վարձու տուի՞ք :

— Այս, կէս ժամու չափ առաջ վարձու տուի ա'յնքան սիրուն կնոջ մը որ, ծերունի ըլլալուս հակառակ, յուզում մը զդացի :

— Այդ կինը գետին վերի թէ վարի կողմը զնաց :

— Վերի կողմը, աշխովս հետեւեցայ իրեն մինչեւ կոր գիծը, ուր ընականաբար չտեսաց այլեւս :

— Ուրեմն դժբախտութիւն մը պատահած է, պոռաց գաղտնի ոստիկանը : Ինձի պէս դուք ալ չէ՞ք տեսներ մօ-

տեհնալը շրջած նաւակի մը , որ ծիչտ կոր գիծին կողմէ կոսպայ :

— Կարելի՞ բան է , պառաց ծերունին :

Աւշադրութեամբ նայեցաւ զազմնի սոտիկանին մասնաւուծ կողմը , ու այս անգամ տեսու . նաւու մը սղնափայտը , որ ջարին երեսը կը ծփար և հոսանքն ի վար կ'իջնէր արագօրէն :

Բարի Աստուած , շարունակեց ծերունին վշտահար ձայնով մը , երանի՞ թէ ջուրը ինկած չըլլայ : Կեանքիս մէջ այնշափ չնորհալի ու ամիչափ ճաճանչագեղ գէմք մը չեմ տեսած :

Կարթածող մը բերաւ և եղերք քաշեց նաւակիր , որ հիմա չառ մօտ էր իրենց :

— Իմ խեղճ նաւակիս է , բառ ծերունին սարսափահար : Ա՛յ տարակոյս չկայ : Այդ հէք կինը խեղդուած է :

— Սոսկալի բան պիտի ըլլար ատիկա , բառ 0' նէլլ , որ հանդարառութիւնը և պազարիւնութիւնը պահուծ էր քիչ մը : Բայց թերեւս այդպէս չէ :

Այս , կարելի էր , բայց այնպէս չէ , բառ Փինքէրթին , որ իր խորաթափանց աչքերովը կը քննէր շարունակ գեաը և որ կարթածողը Մարլի ձեռքէն առաւ , ջուրին մէջ նետեց և կեռովը բռնեց կապտագոյն առարկայ մը , զոր իրեն քաշեց : Այդ առարկան շրջազգեաս մըն էր և շրջազգեասին մէջ կը զանուէր կին մը , որուն մատանիներով ճանրարեւնուած ձեռքերը երեւցան առաջին անգամ ջուրէն դուրու :

Ծերունին անձկութեան ազազակ մը արձակից :

— Ան է , ան է , ով Աստուած իմ , բառ : Ի՞նչպէս կրցաւ տեղի ունենալ ատիկա : Արդիօք դժբախտ կինը կամովին խեղդեց ինքինը :

Գալով իրանացիին , անիկա խուլ բացագանչութիւն մը արձակած էր և մալորաւն աչքով մը կը դիմէր հէք կինը , զոր Փինքէրթին դրաւ եղերքին վրայ :

Մեռած , պազած և տժգունած էր : Իր սոկելոյն երկար մազերը շողչազուն վերարկուի մը պէս կը շրջապատէին զինքը : Իր սրանչելի գեղեցկութիւնը ա՛լ աւելի կը ցոլանար , հակառակ իր անշարժ զիմապիծերուն վրայ կարդացուող սուկումի և զարմանքի արաւայայտութեան և այն զարհուրանքին , որ մթագոյն շափիղայի նմանող իր խոշոր աշ-

քերը կ'ընդլայնէր և որոնց բիրը կը փայլէր , արեւին մէկ ճառագայթէն խայթուած :

— Ա՛ն , կը ճանչնամ այս կինը , բառ վերջապէս 0' նէլլ : Տօլլի Տօրլըն է , թէաթու Մէթրօրօլ տ'Ալպանիի աստղը , ամէնէն նշանաւոր , ամէնէն օժտուած և ամէնէն առաջնակարդ գերասանուհին , զոր երեք տեսած ըլլամ :

— Տօլլի Տօրլըն ... , այս , այս անունը տուաւ ինձի երք նաւակս վարձել եկաւ , յայտարարեց թիէու Մարլ : Ինչդա կին , որքան վասկուուն էր և սրբան զուարթ կ'երեւար : Ինձի հարցուց թէ պարոն մը եկած և զինքը փնտուած էր : Փինքէրթին , մեռելին վրայ ծռած , ուշագրութեամբ կը քննէր զայն :

Ոսկեգոյն երկար մազերը վերցնելով , քունքին մօտ գտաւ ուեւորակ լայն նշան մը , որ հարուածի արզիւնք էր :

Ցետոյ բանեց տարաբախտ կնոջ ձեռքերը , մատնիներով ծանրաբեռնուած այն գեղեցիկ ձեռքերը և մատները մի առ մի քննեց իննամբով :

Վերջապէս երկու մարդերուն զարձուց գէմքը , որուն արաւայայտութիւնը հետզհետէ աւելի մուայլ երեւայթ մը կ'առնէր :

— Քիչ մը առաջ կ'ըսէիք թէ այս կինը պարոնի մը խօսքը ըրաւ , հարցուց Մարլի :

— Այս , առաջին անգամ այդ հարցումը ըրաւ : Արանեղ երեւայթ մը ունեցաւ այդ պարոնը չգտնելով : Բայց կարծեց թէ իրէ քիչ հարք պիտի զար և յանձնարարից ինձի իմացնել անոր թէ նաւակով մեկնած էր :

— Բայց եկող դացող չեղաւ , այնպէս չէ :

— Ո՛չ , մինչեւ հիմա մարդ մարդասանք չեկաւ :

— Ինչդա կին , բառ գաղտնի սոտիկանը հառաչանքով : Կը կարծէր թէ այդ մարդը շուտով պլատի միանար իրեն ու մարդէն չէր անցըներ թէ սույզ մահուած մը կը դիմէր և ի՞նչպիսի վշտակի մահ :

0' նէլլ գաղտնի սոտիկանին երեսը նայեցաւ զարմանքով :

— Ի՞նչ ըսել կ'ուզէք , Մր . Փինքէրթին , հարցուց : Կը կարծէք թէ ...

— Կը տեսնէք , բառ գաղտնի սոտիկանը իրանացիին մօտենալով և ձեռքը անոր ուսին վրայ զներով գորավագին , բարեբախտութիւն է որ անզատած այսօք մեկնիլ ու զեցի

և հոս եկանք նաւակ նստելու համար : Եթէ այս կիոջ մարշինը գտնուէր, ամէն ոք պիտի կարծէր թէ արկածով կամ թէ կամովին խեղդուած է : Նախզգացումն չէր խարեր զիս և ևս իրաւունք ունէի ծանր գէպքէ մը վախնալու, քանի որ նաև նստելու պահուս, գննուեցայ զգայացունց ոճիրի մը՝ Տօլլի Տօրլընի սպանութեան առջեւ :

Աղաղակ մը ընդմիջեց գաղանի սոսիկանը :

— Սպանութիւն, թոթովեց 0' նէլլ : Կարելի՞ է որ այս անուշիկ և շնորհալի արարածը սպաննուած ըլլայ : Ո՞վ է ուրիմն այն անարդ ոճրագործը, որ կրցաւ այսափ գեղեցիկ ու խսառուներով ու յաջողութիւններով առցուն կեանքի մը դէմ դաւել :

— Զեմ ձանչնար այդ մարդը, բայց ըստիս վրայ վըստահ եմ, պատասխանեց Փինքէրթըն : Ահաւասիկ այն զընսութիւնները, որնք ասածնորդեցին զիս չկասկածիլ ոճիրին վրայ : Հիմա վերաքաղ պիտի ընէք զանոնք ինձի հետ . . .

Նախ և առաջ զիտեցէք այս խեղճ կնոջ դէմքը : Կամու վին ինքինը սպաննող մէկու մը զիմաղիծներուն վրայ երեք տեսած էք անհուն անձկութեան այս արտայալութիւնը, այս զարհութանըն ու զարմանքը : Ապահովապէս անիկա ընաւ չէր սպասեր պատահածին և առկէ զատ, Բիէռ Մարլ ըստա մեղի թէ կինը զուարթօրէն մեկնած էր նաւակով : Զայն սպաննողը անամօթ որիկայ մըն է, որ ուզած է ամէն պարագայի մէջ օճիքը աղատել անոր ձեռքէն : Այս մասին տարակոյ չկայ : Դիտէր թէ անիկա հոս պիտի գար և առաջուընէ պիտի մեկնէր եթէ ժամալըրավայրը չգտնէր զայն, վասնզի ոճրագործը, ըստ իս այն մարդն է, որ պիտի զար և Բիէռ Մարլի պիտի հարցնէր զայն : Այդ մարդը զետին կոր զիծին միւս կազմէն նստած է իր նաւակը : Գանէ ևս պիտի կը վերակաղմեմ ոճիրը : Այդ կնոջ հետ ունեցած է խօսակցութիւն մը, որ երկար չտեսեց, վարնզի զիտի կը շատ շտուով հոս եկաւ : Զեմ զիտեր թէ ի՞նչ խօսեցան իրարու հետ, բայց կարելի է թէ իրարու հետ վիճաբանած ըկան ուրիշ կնոջ մը համար : Այն ատեն մարդը այս կիոջ նետուած և ջուրը ձգած է զայն : Կինը յուսահատական կորովով մը պայքարած է : Իր զգեստները բոլորովին պատառած են : Յաջողած է նաւակին եղերքին կառչի :

Բայց անիկա թիտկի հարուածներով ուժգնորէն զարկած է անոր : Տեսէք ձեռքերը, որ ջախճախուած են : Դիտեցէք քունքին վրայի ձմլուածքը : Վերջապէս ջուրին մէջ անհատացած է : Մարդը եղերքին մօնեցուցած է նաւակը, ցամաք ելած և թողած է որ նաւակը դետն ի վար երթաց : Բայ իս, այսպէս եղած է ամէն բան :

0' նէլլ և Մարլ ուշադրութեամբ մտիկ ըրած էին պատմութիւնը գալանի սսափիկանին, որուն պարզ և զօրաւոր եղրակացութիւնները համոզած էին զանոնք :

— Զարհութելի բան է, պոռաց 0' նէլլ, մինչ ծերունին կատաղութենէն կ'արտասուէր, այդ փափուկ, շնորհալի, ծաղկահասակ ու կենսալից էակին վրայ գործուած ահուելի ոճիրը միտք բերելու :

— Կորսնցնելիք ժամանակ չունինք, ըստ Փինքէրթըն, 0' նէլլ, բարեկամն, դուք որ Տօլլի Տօրլընը կը ձանչնար, կինս ք ըսել ինձի թէ ի՞նչ պայմաններու մէջ կ'ասպէք անիկա :

— Խիստ խոհեմ և պարկեշտ աղջկան մը պէս, որ իր մօրը հետ կը բնակէր Մբրութըն Աթրիթ : Աւելի բան մը չեմ զիտե՛ :

— Լա՛ւ, հիմակուհիմա կը բաւէ ատիկա, ըստ գաղանի սոսիկանը : Գետն ի կեր պիտի ելլենք և պիտի ջանանք գանել ձիշտ այստեղը, ուրիէ ոճրագործը նաւակ նստած է Յետոյ քաղաք պիտի զտոնամ և պիտի երթամ այս ահուելի լուրը անձամբ ծանուցաներու հէք Տիկին Տօրլընի : Յետոյ իրմէ պիտի տեղեկանամ ինչ որ կը վերաբերի իր աղջկան : Բիէռ Մարլ պիտի հոկէ մեռելին վրայ, մինչ մենք մեր քննութիւնը պիտի կատարենք : Երբ քաղաք դատնամ, դատական պաշտօնեան պիտի զրկիմ ձեզ, մահը և անոր բնոյթը հաստատելու համար :

Փինքէրթըն և բարի իրլանտացին նաւակի մը մէջ ցատկեցին և ուժգին կերպավ թիավարեցին դէպի դետին կոր զիծը, մինչ ծերունին դիակին քոյի կը մնար այսափ տըժուոյն, ախուր և ընկճուած վիճակի մէջ, որչտի եթէ իննզիքը ի՞ր խոկ աղջկան վրայ եղած ըլլար :

ԵՆԹԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՀԵՏԵՒՂԻԹԻՒՆՆԵՐ

Երկու մարդիկը շուտով հասան գետին դարձած կողմբ : Մարդասպանը չէր կրնար այդ տեղը եղած ըլլալ տաշկաւին, վասնզի նաւեր վարձու տուողին տունէն պիտի տեսնուեր : Այսու հանգերձ գաղանի ոստիկանը ամենամեծ ուշադրութեամբ կը քննէր երկու եզերքները, տեսնելու համար թէ ալիքները Տօլլի Տօրլընի վերաբերեալ առարկայ մը քերած չէր հնան :

— Այս նորատի դերասանունին ո՞րչափ ժամանակէ ի վեր Ալպանի կը գտնուի, հարցուց աղարակատէրին, իր քննութիւնը շարունակելով մէկտեղ :

— Առ. առաւելն չորս շաբաթէ ի վեր :

— Աւելի չէ, հարցուց գաղանի ոստիկանը թեթեւապէս զարմացած : Եւ աղկէ առաջ ո՞ւր կը գտնուէր ուրեմն :

— Եխու Եօրք, ուր առած է իր կրթութիւնը : Ինձի ըսին թէ առաջին անգամ թէ աթու Մէթրօքօլն է որ վարձած է զայն երեք տարուան համար եթէ չեմ սիսլիր : Ասոր համար էր որ հեար բերած էր ծերունի մայրը :

— Եւ միայն չորս շաբաթուա՞ն մէջ է որ այնքան ընդհանուր համակրութիւն շահած է :

— Այսո՛ : Պէտք է բաել թէ սովորական կին մը չէր : Ա՛շ միայն անթերի արաւետագիտունի մըն էր, այլ նաեւ բարգարին մէջ ճշմարտապէս հոգուազիւտ հրապոյր մը և սիրունութիւն մը ցայց կուտար նոյնիսկ ամէնէն նշանաւոր անձերու քոյ : Ասոր հեա մէկտեղ, կը հաւասարեմ ձեզ թէ անթերի ընթացք մը, արաւետ մը ունէր ամէն մարդ իր տեղը կեցնելու և թոյլ չտալու : Համար որ տարիաւորները շատ մօտենան իրեն :

Բայց Փինքէրթըն այլեւս մտիկ չէր ըներ բարի աղարակատէրին խօսքերուն : Իր խորհրդածութիւններուն մէջ թաղուած էր :

— Մարդասպանը թերեւս Եխու Եօրքէն եկած է, ըստու : Նախանձը չէ արդեօք ոճիրին թելազրիչ պատաժոր : Բայց ո՞չ, չեմ կարծեր : Նախանձին ներչնչած մէկ ոճիրը կը գործուի կիրքի բորբոքման մը, զայրոյթի նոպայի մը մէջ : Ասոր պէս պազարեամբ չի գործուիր : Այս ոճրագործը նախանձու մը չէ, ո՞չ ալ սիրահար մը, եթէ ընտղումու չիարել :

զիս . . . Տարաբախա կինը ոպաննելու համար միայն նաւակ նուած է : Ի՞նչ ընելիքը շատ աղէկ գիտէր առաջուընէ : Զանիկա բնաջինն ընկլու մէջ մեծ շահ մը ունեցած ըլլալու էր : Այս վերջին ենթադրութիւնը կը հաստատուի այն անգութեամբ, որով ջախջախուած է անոր մատներն ու գլուխը, երբ նաւակին կառչեցաւ մնիկա :

Օ՛ Նէցլ լութեամբ մտիկ Կ'րմէր գաղանի ոստիկանն մինախօսութիւնը և կը գիտէր որ Փինքէրթըն, խօսելով մէկտեղ, գետին երկու եզերքները կը քննէր այնպիսի սուր տեսողութիւնով մը որ անշուշտ ո՞ւ և է հետք պիտի շխուսափէր անոր ուշադրութիւնէն :

— Ասկէ կ'եղբակացնեմ թէ, շարունակեց Փինքէրթըն, Օր. Տօլլի Տօրլըն, ինչպէս կրնայ գուշակուիլ, ողջութեանը պարտգային վտանգաւոր պիտի ըլլար իր սպանիչին համար թերեւս տեղեակ էր իրազութեան մը, որուն հրատարակումը կրնար կորատեան մատնել զինքը, ո՞վ գիտէ, ոճիր մը թերեւս, զոր գործած էր ատենօք : Այս աղջիկը հարծւաս էր :

— Ո՛չ, ապահովապէս, ըստ Օ՛ Նէցլ գլուխը երեցնելով : Հազիւ քանի մը գոհարեղին ունէր և թատրոնէն իր ստացած թոշակովը կ'ապրէր : Կ'րսուիթէ մայրը մանր մունը եկամուտներ ունի : Սա սոսոյդ է թէ երկուքն ալ սմենամեծ ինայութիւնով կ'ապրէն, աղջկան պայմանաւորուելէն սուած :

— Իր գեղարուեսական կրթութեան ծախքերը ո՞վ ըրած է ուրեմն :

— Իսքը կը պատմէր թէ թատրոնի համար իր ունեցած ընական ընդունակութիւնները ուշադրութիւնը գրաւած էին Եիւ Եօրքցի նշանաւոր դերասանունի Իրմա Նէթըրլէնսի, որ ձրիարար գաս տուած էր իրեն :

— Թրամ' լա՛ լա՛, ըստ Փինքէրթըն բոլորովին թերահաւատ երեւոյթով մը, Նէթըրլէնսա այսպիսի անշահափառի գործ մը ընկլու անկարող կ'երեւայ ինձի : Անիկա իր գասերուն համար շատ մեծ գումարներ կ'ամնէ իր լաւագոյն աշտկերաններէնսանգամ : Նայն իսկ իրեն սկզբունք ըրած է ձրիար խորհուրդ չտալ ընտու : Ես ատիկա իմացած եմ ինեղն աղջիկէ մը, որ խորհուրդ մը իմնղրած էր անկէ և զոր իրմա Նէթըրլէնսա համբած էր առանց վարանելու :

— Բայց նոյն ինքն Օր. Տօրլըն է որ . . .

— Այս մասին տեղեկութիւն պիտի առնեմ:

Դեմին կոր գիծին մէջ մտան և քիչ մը մեղմացուցին իրենց նաւուն արագութիւնը:

Փինքէրթըն իր բազէի աչքերով կը պրապտէր եղերքը, կանոչի զարնող ալիքները, հորիզոնը, անջրապեսը:

— Կոր գիծին ճիշդ մէջտեղը կեցէր, դէպի ձախ եղերքը դառնալով, ըստ յանկարծ:

Նաւակը քանի մը բովէի մէջ մօտեցած էր եղերքին: Գաղսնի ոստիկանը ծուեցաւ նաւուն կողին վրայ և ջուրէն հանեց սեւ դայնով առարկայ մը, որ եղերքին քարերուն կառչած էր և զոր անշուշտ հոսանքը բերած էր հոն:

Ռուսական կաշիէ պայտուակ մըն էր, որ երկար առեն մնացած ըլլալու չէր գետին մէջ: Պողպատէ ճարմանդ մը ունէր:

Փինքէրթըն բացաւ զայն: Պարունակութիւնը մնասուած չէր, ջուրը հաղիւ ներս թափանցած ըլլալով: Գաղսնի ոստիկանը նախ և առաջ զուրու հանեց բաւական թիւով այցաքարտեր յանուն Օր. Տօլլի Տօրլընի, թէաթր Մէջրօրու, Ալյասնի: Հասցէն ալ կար.— Միքաթըն Սթրիթ, 245:

— Նորատի գերասանուհին ձեռքի պայտուակն է, ըստ գաղսնի ոստիկանը: Մօրը հասցէն կայ հոս: Բան մըն է ասիկա: Ուրիշներուն հարցնելու պէտք պիտի չտնենամ: Հիմակուհին շարանակենք մեր քննութիւնը: Թերեւս տակաւին շատ մը շահեկան բաներ գտնուին այս պայտուակին մէջ:

Յեսոյ երեւցաւ հիանալի ապարանջան մը: Ոսկիէ էր: Իբրա ծանը կը կըսէր: Զարդարուած էր թանկագին քարերով և ներսի կողմը սա՛ արձանագրութիւնը կը կրէր. Ա. Տօլլի, 29, 9, 18, իր Հերքլանէն»:

— Եռէ՛ր մը, մրմուաց Փինքէրթըն: Աւելի աղէկ թիւու գարելու համար ապարանջանը հանած և պայտուակին մէջ զրած պիտի ըլլայ: Այս արձանագրութիւնը կը ցուցնէ թէ Օր. Տօրլըն իր սիրու մէկու մը տուած էր: Ա՛ն, նամակ մը . . ., թերեւս այս մասին տեղեկութիւն մը պիտի տայ մեզի:

Այս խօսքերը բակով, գաղսնի ոստիկանը առաւ պատիքի մը, որուն վրայ մեռեալին հասցէն գրուած էր կոչու գիրերով:

Պահարանին մէջ գտնուած նամակը հետեւեալ կերպով խմբագրուած էր.

«Անուշ և ամենասիրելի Տօլլիս.— Կարծեմ թէ բացակայութեանս համար վշտացած և միեւնոյն ատեն տիրած պիտի ըդաս չորս շաբաթէ ի վեր որ Սլավանի կը գտնուի: Բայց կը հաւատաեմ քեզի թէ կարելի չեղաւ քովդ գալ և մեր միութեան հրապարակումն ընդդիմացող բոլոր արդեկըները հարթուած չեն տակաւին: Կը յուսում թէ քիչ օրէն պիտի հարթուին և այն ատեն պիտի կրնանք ամենուն առջեւելի ճակատաբաց և մեր սիրոյն վրայ հպարտ:

«Քիչ մը եւս համբերութիւն, անուշիկ սիրելիս: Վազր կ'ուղիմ քեզ տեսնել և հետզ խօսիլ: Ասոր կը փափարիմ ամենաջերմ ու ամենախանդավառ կերպով: Անա թէ ի՞նչ կը ինդքեմ որ ընես.— Հըտարն գետն ի վեր գնա՛ մինչեւ ծերունի Բիէռ Մարլի տունը: Զանա՛ հոն գտնուիլ ժամը 11ին: Նաւակ մը պիտի վարձես ու այն ատեն հանգիստ կերպով պիտի կրնանք խօսիլ և շաղակրատել ամենակատարեալ առողջներ քու հաւատարիմէդ՝ ՀԵՐԼԻՏ ՊԼՈԲ»:

Փինքէրթըն, որ գրէթէ բարձրածայն կարդացած էր նամակը, կը յապազէր քննել զայն:

— Խեղած Հերրլու Պլոք, ըստ մեզմիւ իր քովէն ագտակատէր Օ՛ Նէյլի կարեկից ձայնը, ի՞նչ յուսահատութիւն երբ իմանայ թէ իր գորովալից բարեկամահին ապանչուած է:

Գաղսնի ոստիկանը վլուխը վերցուց խկոյն և ժպահցաւ ագտակատէրին:

— Նամակը երէկ գրուած է, ըստ ժամացոյցը հանելով: Հետեւաբար Օր. Տօլլիի կատարած սպոյար ճիշդ այն է, որուն խօսքը կ'օլլայ այս նամակին մէջ: Մը. Պլոք կը գրէ անոր թէ ժամը 11ին պէտք է մեկնի Բիէռ Մարլի տունէն և թէ ինք ալ քիչ մը ետքը իրեն պիտի հետեւի ուրիշ նաւակով մը . . . Հիմա ժամը 12ուկէն է և Պլոք տակաւին եկած չէ:

— Արդեւք մը ունիցած պիտի ըլլայ :

— Ամենեւին : Իր տեղն էր նորատի գերասանութիւն դալէն առաջ ու այդ տեղը գետին կոր զիծին վերեւ է, և գերբին վրայ . . . Անոր սպառած է հոն, որպէսզի անոր նուռակը նոտի :

— Ուրեմն, ըստ Օ՛ Նէլլ, որ սարսափահար ընկրկեցաւ, կր կարծէք թէ այդ Պլօքն է մարդասպանը :

— Չեմ կարծեր, այլ վաստ' հ եմ :

— Բայց վերջապէս խնճիթ բան է ասիկա: Ի՞նչպէս կուգեք որ ինչ մը այսքան սիրուն նամակներ գրող մարդը մաքէն անցընէ սպաննել այդ կինը :

Փինքէրթըն ուսերը թոթուեց :

— Պարզ է սակայն, ըստաւ : Եթէ նախատալից կամ սպառնալից նամակ մը գրէր, կինը պիտի չգար: Ասիկա չոյսի պէս պայծառ է ինձի համար: Այդ Պլօքը իր կինը սպաննած է:

— Ի՞նչպէս, իր կինը :

— Այս, իր օրինաւոր կինը: Որոշ է սակայն: Նամակը այս մասին ո՛ւ և է կառկած չի ձգեր:

— Սուրբ Պատրիկ վիկաց որ բան մը չեմ հասկնար: Եւ սակայն իրաւունք ունիք, կարելի չէ կառկածիլ: Բայց այդ մարդը ի՞նչ պատճառ ունէր սպաննելու իր կինը, որուն զեղցիկութիւնը, յատկութիւնները և տաղանդը կ'զգիլիէն տամբնը:

Փինքէրթըն պահ մը մտածեց :

— Անաւասիկ ենթադրութիւն մը, զոր շինեցի մտքիս մէջ, ըստաւ, բայց աւելորդ է ըսել թէ կրնամ սիսլիլ: Պիտի շարունակինք մարդը անուանել Հերըլա Պլօք, թէեւ չառ կը կառկածիմ որ իր բուն անունը այս եղած ըլլայ: Ուրեմն այդ Հերըլա Պլօքը, խիստ տարփատենչ, բայց ձշմարխութիւնէ զուրիկ, նիւ նօրքի մջ Օր. Տօրընը ճանշած և սիրուած է անոր: Խենթի պէս սիրած է զայն ո՛չ թէ սրառվը, այլ վայրենիի մը նման, ի՞նչպէս որ է — իր զգայարանքներովը և էրիկ մարդու ունայնամտութիւնովը:

— Ի՞նչ բան այսպէս կարծել կուտայ ձեզի, հարցուց Օ՛ Նէլլ հետաքրքրուած:

— Այն գարշելի եղանակը, որով կասարած է ոճիրը . . .

Ուրեմն Հերըլա Պլօք չառ հարուատ է: Բազմաթիւ և հիմնալի նուերներ կ'ընէ իր սիրուհին, ինչպէս, օրինակի համար, ոս ապարանջանը, զոր տուած է երեք տարի տուած և որ տուազն 809 տոլար կ'արժէ: Աղջիկը պարկեցաւ է: Կը հաւանի տեղի տալ ա՛յն ստեն միայն երբ համոզուած է թէ լաւ շարժառիթի համար է, ինչպէս կ'ըսուի հասարակօրէն . . . Ուսափ Հերըլա Պլօք, զայն վայելելու համար, կ'ամուսնանայ անոր հետ: Կ'ենթադրեմ նաեւ թէ ի՞նք է որ նէրըլէնտին դրամ վճարած է, այն դասերուն համար, զոր անդիմա տուած Օր. Տօրընի:

— Ի՞նչո՞ւ պիտի չըսէր տտիկա:

— Վամնզի հարկ պիտի ըլլար խոստովանիլ թէ կը ձանչնար Պլօքը: Արդ, վատահ եմ թէ չառ գաղտնի կերպով կը տեսնուեին իրարու հետ և թէ ո՛չ ոք կը կառկածէր իրենց յարաբերութիւններուն մասին: Հերըլա Պլօք կը խօսէր իրենց միութեան հոչակումին ընդգիմացող արգելքներու վրայ, որոնք ժամանակին հետ պիտի հարթուեին: Այս կերպով ձեռք բերու անոր լսութիւնը: Եւ յետոյ, հաւանական է որ Օր. Տօրի սիրայօժար սպաննուեցաւ, վասնզի իր պատմոյն հանդէպ ունէր անսահման վատահութիւն մը, սիրոյ և երախտագիտութեան վրայ հիմնուած:

— Երախտագիտութիւնն . . . , ինչո՞ւ:

— Պարզապէս անո՛ր համար որ անդիմա վճարած էր իր գեղարուեստական կրթութեան ծախոքը:

— Ատիկա ապացուցուած չէ:

— Ինձի համար ապացուցուածի պէս է: Կը յուսած այս իրիկուն ձեռք բերել ատոր ապացուցը:

— Ծառ կարելի է: Բայց վերջապէս ինչո՞ւ այդ մարդը սպաններ զայն:

— Ճիշտ այն արգելքներուն պատճառաւ, զորս չէին կրնար հարթել: Հերըլա Պլօք կ'ասլէր Ալպանիի մէջ, իսկ իր կինը՝ նիւ նօրքի մէջ:

— Կարելի պիտի չըլլայ զանել ամուսնութիւնը կատարող քաղաքային պաշտօնատարը:

— Ծառ դժուար պիտի ըլլայ և բոլորովին անօգուտ: Անմնք կրնան չառ աղէկ ամուսնացած ըլլալ ամերիկեան ուրիշ նահանգի մը մէկ պղտիկ խորշին մէջ:

— Ճիշտ է... ի՞նչ է ձեր կարծիքը այդ անյաղթելի
արգելքներուն վրայ:

Փինքէրթըն կիսովին զոցեց աչքերը և սկսաւ Հույսը
երեցնել:

— Այդ արգելքները կրնան զանազան հանգամանքներ
ունենալ ըստ: Օրինակի համար, Պլոք կրնայ երեւան ելլել
չուզող ոճրագործ մը ըլլայ:

— Ո՞ն անզը, եթէ հաբուստ է, ինչպէս կ'ըսէք, Մր.
Փինքէրթըն, պէտք է յարգուած ըլլայ:

Փինքէրթըն սկսաւ ինդալ:

— Շատ աղէկ կը տրամաբանէք, 0' նէլլ, ըստ: Այն
առեն ուրիշ ենթագրութիւն մը քննել պլտի տամ ձեզի:
Ենթագրեցէք ուրեմն թէ այդ Հէրրլար Ալպանիի մէջ հա-
րուստ և յարգուած մարդ մը ըլլայ: Արգէն ամուսնացած է
երբ ծանօթութիւն կը հաստատէ Օր. Տօլլի Տօրլընի հետ...
կը տեսնէ աղջիկը, կը սիրահարուի անոր, աչքին ո՛չ տաել
կ'երեւայ ոչ խմել: Կ'աւզէ ամէն գնով վայելել վրայն: Եւ ո-
րովհետեւ աղջկան դրած միակ պայմանը ամուսնութիւնն է,
չի վարանիր ամուսնանալ և հետեւապէս շվթայակապ աշ-
խատութիւնով պատժուելիք ոճիր մը գործել: Թերեւս նա-
խապէս չխորհեցաւ իր արարքին հետեւանքներուն վրայ,
հակառակ նախզդուշտիւններուն, զորս ձեռք տռած էր
այդ արարքը զաղոնի պահելու համար: Բայց քիչ մը ետքը
վտանգին մօտենալը կը տեսնէ: Գործը վրդովիչ հանգամանք
մը կ'առնէ: Տօլլի Ալպանի քաղաքին թէաթու Մէթրօրովի
մէջ պաշտօն կ'ստանձնէ: Համոզուած եմ թէ Հէրրլու Պլոք
ձեռքէն ինչ որ կուգար բրած է աղջիկը տարհամոզելու հա-
մար, բայց անփկա չէ աղջուած: Դիրքի և թոշակի տեսակէ-
տով խօսու զեղեցիկ ըլլալուն, աղջիկը չուզեր հրաժարիլ ա-
ռաջին պաշտօնէն, որ կը ներկայանայ իրեն, իր ուստիմք
տաւարտելէ ետք: Ալպանի կուգայ, իր ամուսինին ծննդա-
վայ յըը: Կը հառկնաք: Այդ վայրկեանէն սկսեալ, Հէրրլու
Պլոք կ'ստանէ գայթակղութեան ծագելուն: Փուչի վրայ է:
Միեւնոյն ատեն իր ոէրը կը նուազի, վասնզի մտահոգու-
թիւնն է որ ոէրը կը մեռցնէ: Այլ եւս ուրիշ բանի վրայ չի
խորհիր բայց եթէ օձիքը անոր ձեռքէն ազատել ո՛ւ և է ձե-
ւով: Զեմ ըսեր թէ անմիջապէս սպանութեան վրայ խորհած
է: Բայց վերջապէս կացութիւնը անտանելի էր: Զէր կրնար

շատ երկար տեւել: Տօլլի երեք տարուան յանձնառութիւն
մը ունէր և չորս շաբաթէ ի վեր որ հոն էր, Հէրրլու Պլոք
ստիպուած էր պահուորտի, վախնալով որ Տօլլի կը ճանչնայ
վինք և իր բուն անունը կ'իմանայ: Այս կերպով է որ այդ
մարդուն զիսին մէջ կը ծնի քիչ կը հասուննայ ոպա-
նութեան մը միջոցաւ ինքզինքը իր կող ձեռքէն ազատելու
գարշելի ծրագիրը: Այս չորս շաբաթուան միջոցին գիշեր ցե-
րեկ կը խորհի անոր վրայ, մինչեւ այն վայրկեանը, այսօր
իսկ, ուր կը գործադրէ իր ծրագիրը:

0' նէլլ, համակ չնչառպառ, հետեւած էր գաղտնի ու-
տիկանին եղբակացութիւններուն:

Հետզհետէ աւելի կ'սրանչանար այդ մարդուն վրայ, որ
առանց նիւթական լուրջ նշան մը միայն ունենալու, կը վե-
րակազմէր բոլոր այս տռամը, որպէս թէ. ներկայ գտնուած
ըլլար:

Իրենց նաւակին հետ մնացած էին գետին կոր գիծին
մէջ:

Ակուն կամոց կամաց յառաջանալ միմչեւ որ Փինքէր-
թըն անգամ մը եւս նշան ըրաւ կենալու: Դարձեալ մօտե-
ցան եղերքին, որուն ցեխուտ մամին վրայ, խիտ մացանե-
րու միջեւ, որոշապէս կը տեսնուէր նաւակին ողնափայտին
թողած հետքը, երբ զերատանունին իր նաւակին մէջ առած
էր մարզը: Գետինը, թուփերուն միջեւ, քարուտ էր և Փին-
քէրթըն ոտքի հազուադէպ հետքեր միայն կրցաւ գտնել: Եւ
այդ հետքերն ալ շատ որոշ չէին որպէսպի կարելի ըլլար
ոտքին չափը առնել:

Միայն կրուկի հետքերը լաւ կ'երեւային և առաջին տե-
սութեամբ կարելի էր հասկնալ թէ անոնք էրիկ մարդու ոտ-
քի մը կը պատկանէին:

— Հիմակուհիմա ասիկա կը բաւէ ինձի, յայտարարեց
գաղանի ոստիկանը: Աւելի երկար տաեն հոս մնալու պէտք
շունիմ: Քննութիւնս պիտի շարունակեած քաղաքին մէջ: Կը
կարձեմ թէ մարդասպանը պլտի չփախչի ձեռքէս:

Գրաբանը զբած էր մեռեալին ձեռքի որայուսակը:

Նաւակը ջուրին ընթացքովը իջու մինչեւ այն կամրջա-
կը, ուր Բիէռ Մարլ տակաւին կը պահպանէր տարաբախու
կոնջ դիմակը:

— Մա'րլ, պոռաց անոր գաղանի ոստիկանը, մենք մեր
նոր Փինքերըն 13

ճամբան կը շարունակենք : Երբ Ալպանի հանինք, դատական պաշտօնեան պիտի զրկենք ձեզ : Բայց շատ կը խնդրեմ որ իմ հեթաղութիւններուս մասին բան մը չըսէք : Եթէ դատական պաշտօնեան կը կարծէ թէ խնդիրը անձնապաշտութեան մը վրայ է, թողէք զայն իր սփառին մէջ :

— Շատ աղէկ : Բասնիդ պիտի ընկմ, կրնաք հանգիստ ըլլալ, Մր. Փինքէ՛րթըն, պատասխանեց ծերունին, որուն խօսքին կարելի էր վստահիլ, ինչպէս հաւասարեց Օ՛ Եէլլ :

Նուակը խիստ արագօրէն սահեցաւ ջուրին վրայ և չոտքին ատենէն հոտաւ քաղաք, առփորական նուամատոցք : Այն տեղ նաւակին պահպանութիւնը յանձնուեցաւ . Մարլի մէկ արհեստակցին : Նախ Փինքէրթըն ամէնէն մօտ հեռաւ դրաստոնը գնաց և հետեւեալ հեռագիրը յանձնեց իր գործակից Մօրիսընի հասցէն :

«Մօրիսն, նիւ Եօրք, գրասենեակ Փինքըրթընի . — Դեռասանուի Նէթրըլինսէն անմիջապէս տեղեկացիր թէ Տօլլի Տօրլըն իրմէ ձրի դառ առաջ է : Եթէ չէ առաջ, ո՞վ վարած է : Յետոյ կուգաս կը գտնեմ զիս Օթէլ Պրիսթօլ . — Ե. Փ.» :

— Ի՞նչ պիտի ընէք հիմա, Մր. Փինքէրթըն, հարցուց բարի երլամատացին :

— Քանի մը այցելութիւններ պիտի ընկմ և կը չինդրեմ ձեզմէ որ հաճիք Օթէլ Պրիսթօլ սպասել ինձի : Վերադարձիս, այդ այցելութիւններէն մէկ քանիին արդիւնքը պիտի բաեմ ձեզի :

Գաղտնի սատիկանը փութաց մեկնիլ, մինչ ադաբակամերը կ'ողղուէր նշանակուած օթէլլ :

ԵՐԿՈՒ ԿԱՐԵՒՈՐ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Նախ Փինքէրթըն կառք մը բանեց և դատական պաշտօնեային մօտ գնաց :

Խնդրեց անկէ որ անմիջապէս երթայ նաւ վարձու արւող Բիէռ Մարլի մօտ, ուր կը գտնուէր Հրասընի մէջ խեղդուած կնոջ մը դժիակը : Յետոյ նորէն կառքը նոտաւ հետեւեալ հասցէն առաջ կառապանին — Մըքսթըն Աթրիթ, թէլ 245 : Կ'ողղէր տեսակցութիւն մը ունենալ դերասանուհին ծերունի մօրը հետ :

Երբ կառքը կեցաւ այն առնին առջեւ, որուն երրորդ յարկը կը բնակէր տիկին Տօրլըն, գաղտնի սատիկանը չկրցաւ զսպէլ բուռն յուզում մը :

Իսք որ խիստ յաճախ ամենամեծ պաղարիւնութեամբ կը զիմազրաւէր ահուելի վատանգներու, դող մը կ'զգար մտածեւ լով թէ այդ խեղճ ծերունի կնոջ պիտի իմացնէր իր միակ և սիրեցիալ աղջկան մահը :

Հաղար անգամ նախապատիւ պիտի սեպէր առանձինն մանել աւաղակներու որջի մը, քան այդ խաղաղ և պարկեցաւ տան մէջ :

Բացց չէր կրնար նահանջել : Կառապանին ըստ որ սպասէ և դանդաղօրէն եկաւ երեք յարկերէն վեր :

Զանդակը զարկաւ :

Ճերմակ մաղերով կին մը եկաւ դուռը բացաւ :

— Տիկին Տօրլընը ով է, հարցուց գաղտնի սատիկանը :

Ես ինքու եմ, պատասխանեց պառաւը, սիրուն գէմքով մը, այցելուին վրայ սեւեռելով ա'յսպիսի աչքեր, ուրոնք Տօլլիի աչքերուն կը նմանէին, ինչ որ սարսուռ պատճառեց Փինքէրթընի :

— Իմ անունս նախ Փինքէրթըն է, Տիկին, ըստ : Կ'ուզէի մայրկեան մը տեսակցիլ ձեզի հետ . . . , խիստ սատիպողական գործի մը համար . . . :

Ծերունի կինը ետ ետ գնաց, սարապահար :

— Նախ Փինքէրթըն, ըստ : Գաղտնի սատիկանը : Առաւածոյ սիրոյն, ի՞նչ կայ, ինչո՞ւ եկար հոս :

Ներս մացուց և աթոռ մը հրամցուց որպէս զի կարենաց նսակիլ :

Գաղտնի սատիկանը, հետզնեաէ աւելի յուզուած, ամէն տեսակ նախզգուշութիւններով իմացուց անոք այն ահուելի արկածը, որ վերջ առած էր Տօլլիի օրերուն :

Խեղճ կինը մատիկ կ'ընէր քարացած, որպէս թէ, չէր հասկնար :

Վերջապէս վշապին ազագակով մը իր աթոռին վրայ տապակելով, զիտակցութիւնը կորսնցուց :

Գաղտնի սատիկանը ամենամեծ դժուարութեամբ միայն յաջողեցաւ սթափեցնել և իր դժբախտաթեան զիտակից ընել զայն :

Փինքէրթըն անուշութեամբ խօսեցաւ անոք հետ, միսիւ

թարական և քաջալերական խօսքեր ըրաւ, ինչպէս կ'ընեն հիւսնդ տղու մը, և քիչ քիչ ըստ անոր թէ, իր համոզու մով, Տօլլի անձնառական եղած չէր, ու այ արկածով խեղդուած, այլ սարսնութեան մը զան եղած էր:

Այս ատեն մայրը անոր երկու ձեռքերը բռնեց և հեծ կլտանքներու մէջտեղ երգուբնուց ձեռքէն եկածը ընել մարդասպանը երեւան հանելու և արդարութեան յանձնելու համար:

— Տօլլի՛, աղջի՛կո, կ'ըսէր հատկած ձայնով մը: Եատ երջանիկ էի անոր խանդաղատանքին և շատ հապատ՝ անոր տաղանդին համար... Ամէն ոք կը յարգէր զայն ու կը սքանչանա՛ր անոր վրայ... Ի՞նչ պիտի ըլլամ հիմա, Սուսուած թմ... Ի՞նչպէս հանդուրժել տակաւին կեանքին, ես որ իմ պաշտելի աղջկանս համար միայն կ'ասպէի:

— Հանդարանեցէք Տիկին, կը պազախմ, ըստ գաղտնի ոստիկանը: Եթէ կ'ուզէք ձեր աղջկանը վրէքը լուծել, պէտք է աւելի ետքի թողուք արցունքները, որ ձեր վիշտը պիտի սփոփեն: Ես հոս եկաց օդնելու համար ձեզի որ յանշաւորը պատճել տաք և կը ինդրեմ ձեզմէ որ հարցումներուն պատախանէք: Պէտք ունիմ գիտնալու ինչ որ կը վերաբերի Օր. Տօլլիի ներքին գործերուն:

— Իրաւունք ունիք, ըստ ծերունի կինը, ինքինը զրաբելու համար քաջարի ջանքեր ընելով: Հարցաքննեցէք: Ամէնէն ծանր և ամէնէն կարեւոր խնդիրէն ոկսինք: Գիտէ՞ք, Տիկին, թէ ձեր աղջիկը ամսունացած էր:

— Ամուսնացած, Տօլլի ամուսնացած, պոռաց մայրը զայրոյթէն ընդուստ ցատկելով: Ճիշտ չէ, Մր. Փինքէ՛րթըն: Չեզի ըսողը սու՛տ խօսած է:

— Ինծի այնպիսի բան մը ըսող եղած չէ, պատախանց գաղտնի ոստիկանը: Ե՛ս նշարեցի քննութեանսը ընթացքին: Կը տեսնեմ թէ դուք տեղեկութիւն չունէիք...

— Տօլլի ամուսնացած, կը կրկնէր մայրը մտամոլաք: Իմ քովս կ'ապրէր: Կը կարծէի թէ անոր բոլոր մտածումներուն տեղեակ էի...

— Զեզմէ գաղտնի գործելով, ըստ Փինքէրթըն, որ խեղճ կնոջ վիշտը կը տեսնէր, ձեր աղջիկը իր ամուսնոյն փափաքին միայն հնապանդեցաւ: Կը կարծեմ նաև թէ ան

զնարեց իր գեղարտեաստիկան կրթութեան ծախքերը նիւեօրքի մէջ:

— Ենք կ'ըսէր թէ Նէթէրլէնտ ձրիարար կը դասախուեր, թատրոնի համար իր տնեցած գեղեցիկ բնդունակութիւններուն պատճառաւ:

— Անչուշտ, ափ'կին: Բայց իր ամուսինն էր որ կը հրամայէր աղդպէս ըսել ձեզի: Ինչպէս կը տեսնէք, այդ մարդը մեծ աղջեցութիւն ունէր անոր վրայ: Կը զիւթէր, կը կախարդէր զայն, եթէ կարելի է այսպէս ըսել:

— Եերեցէք, պա՛րոն, ա՛լ բան մը չեմ հասկնար... Գլուխս կրակի մէջ է... Երկու գաղափար իրարու հետ կապելու անկարող եմ: Զեմ կրնար կարծել սակայն թէ աղջիկը կարող եղած ըլլայ ուռատ խօսիլ ինձի՝ իր մօրը, որ միշտ ներողամիտ եղած է անոր հանդէպ:

— Պէտք է ներել անոր, ըստ գաղտնի ոստիկանը: Բուլական անուղորմ կերպով քաւեց այդ մարդուն վրայ ունեցած կոյր վաստանութիւնը և այն սխալը, զոր գործել կուտար անոր ձեզի հանդէպ:

Տիկին Տօլլին գլուխս վեր առաւ և աչքերը սեւեռեց գաղտնի ոստիկանին վրայ:

— Այդ մարդը..., թոթովից, Տօլլիի ամուսինը իր սպանիչն է, այնպէս չէ:

Գաղտնի ոստիկանը զիսովը հաստատական նշան մը ըրաւ:

— Ամէնիս համոզուած եմ, ըստ: Կատարած քննութիւնս և զտած խիստ ապացուցիչ և խիստ բազմաթիւ նշաններս այդ համոզումը տուին ինծի:

— Աւրեմն պիտի ձերբակալէ՞ք այդ թշուառականը: Աւնունը գիտէ՞ք:

— Բուն անունը չեմ գիտեր: Բայց գիտեմ այն անունը, որով ամուսնացած է: Հերքլա Պլոք անուն մէկու մը խօսքը լուս էք արդէն:

Ծերունի կինը պահ մը մտածեց:

— Ո՛չ, ըստ վերջապէս, Պլոք անունով մէկը չեմ հանձնար:

— Ե՛ս ուրեմն, ձեր աղջկան ամուսինը այսպէս կը կոչուի: Երբեք գարմանը զգացած չէ՞ք, և ձեր ուշադրութիւնը գրաւած չէ տեսնելով որ Օր. Տօլլի երբեմն երկարատեւ բացակայութիւններ կ'ունենար երբ նիւեօրք կը ընակէիք:

— Աստիկա չեր կրնար զարմանք պատճառել ինծի, պարան, քանի որ միասին չերնք քնակեր: Եւ որովհետեւ մեր տունը բաւական հեռու էր քաղաքէն, Տօլլի նախապատիւ համարած էր նիւ Եօրքի մէջ վարձել պարզ սենեակ մը, ուր շատ քիչ անգամ կ'երթայի աեսնել զինք մինչ անիկա շաբաթը քանի մը անգամ կուգար ինծի:

— Երբեմն ամբողջ շաբաթներով բացակայած չէ:

— Այո՛, քանի մը անգամ: Բայց հոգ ըրած չեմ: Նոյնիսկ որ մը, առառն շատ կանուխ գացի իր սենեակը և չը գասայ զինք: Ժամը 10ին միջոցները եկաւ և ըստ ինծի թէ պատկած էր Օր. Նէթրըլէնտի տունը, ուր երեկոյթ տրուտծ էր և Օրիորդը չեր ուզած թողուլ որ ուշ ատեն մինակը դառնար նոյնիսկ կառքով:

— Եեր աղջիկը քանի՛ տարեկան էր, հարցուց Փինքէրթըն:

— 25 տարեկան:

— Մըշափ ժամանակ դաս առաւ Նէթրըլէնտէն:

— Գրեթէ երեք տարիի շափ:

— Ի՞նչ ըստ ձեզի այն բարանջանին նկատմամբ, զոր իր ամռախին ստացած էր, անշուշտ իր ամռախին թեան առթիւ, հարցուց Փինքէրթըն, ձեռքի պայտասակէն գուրս հունելով և Տիկին Տօլլին երկնցներով հիմասլի գոհարեղէնը:

— Ի՞նչպէս, այս ապարանջանը այդ մարդէ՞ն տռած է: ... Ա՛հ, Տօլլի՛, Տօլլի՛ ... Ինծի ըստ թէ ստացած էր միշտնատէրէ մը, որ Օր. Նէթրըլէնտի տունը հանդիպած էր իրեն և ձեռքը ինսղրած էր ու ինք ալ մերժած էր ...

— Ի՞նչ տիտուր բան է, մոմուց գաղանի ստիկանը: Զինքը հրապուրով այդ սրբկային յանցանքով, այդ բարի և անրիծ աղջիկը ստախօս և կեզծարար եղած է ... Որքան տառապած ըլլալու է այսպէս իր մայրը խարելու ստափաւնին համելէ առաջ:

Տիկին Տօլլին դառնապէս կուլար:

— Այո՛, ըստ, հիմա կը հառկան շատ բաներ: Յախու մերամաղձութեան նոպաներ կ'ունենար: Ամբողջ ժամերով պատռնանին առջեւ կը կենար հեռուն դիտելով և առանց խօսք մը ըսելու: Վերջերս քանի մը անգամ դիտեցի որ անկողնին մէջ կուլար: Երբ իր վշտին պատճառը կը հարցնէի, խռոսափաղական պատափաններ միայն կ'ստանայի: Երբեք չկրցայ ճշմարտութիւնը դիտնալ:

— Զեզմէ պիտի բաժնուիմ, Տիկին Տօլլին, ըստ: Փինքէրթըն, այս բուռն և անմիտթար վիշտին արգահատած: Քերթըն, այս բուռն և անմիտթար վիշտին արգահատած: Միակ հարցում մը եւս: Երբ ձեր աղջիկը թէ աթու Մէթրօրօլի Միակ հարցում մը եւս: Երբ ձեր աղջիկը թէ աթու Մէթրօրօլի գինք պայմանագրութիւն կնքելէ:

— Այո՛, անշուշտ: Պէտք է ըսեմ թէ երբեք բան մը չը հասկցայ: Քանի մը անանուն նամակներ ստացայ, որոնց մէջ համարակած էր արուերդ ինծի չթողուլ որ Տօլլի Ալպանիի թատիորհուրդ կը արուերդ ինծի չթողուլ որ Տօլլի Ալպանիի թատիորհուրդ էր 0ր. Նէթրըլէնտի տունը, ուր երեկոյթ տրուտծ էր և Օրիորդը չեր ուզած թողուլ որ ուշ ատեն մինակը դառնար նոյնիսկ կառքով:

— Զեր աղջիկը քանի՛ տարեկան էր, հարցուց Փինքէրթըն: 25 տարեկան:

— Կատարելապէս կը նմանէր, պատախանեց Տիկին Տօլլին զարմանքով: Միեւնոյն գիրն է, կէտ առ կէտ: Կը ձանչ լուս ուղղորդ գիրերը և տարօրինակ գիծերը: Տարակոյս չը նամ ուղղորդ գիրերը և տարօրինակ գիծերը: Հայ թէ գրողը միեւնոյն անձն է:

— Այդ անանուն նամակներէն մէկ քանի հատ ունի՞ք քովերնիդ:

— Ո՛չ, Տօլլի այրեց զանոնք: Արդէն իր ըոլոր նամակները այրելու սովորութիւն ունէր:

Փինքէրթըն բաւական բան իմացած էր: Ոտքի ելաւ, ծերունի կինը ողջունեց միիթարութեան և ցաւակցութեան ծերունի կինը ողջունեց միիթարութեան և ցաւակցութեան ծերունի անոր և թողուց զայն ամրութապէս իր վշտին անձնատուր:

Իր կառ քը դրան առջեւ կ'սպասէր: Թէ աթու Մէթրօրօլ զնաց:

Քառորդ ժամ ետքը անօրէնին քալ էր, որ ընդունեց Տնօրէնը՝ Ֆարկօ՛ շատ զարգինք ամենաշնորհալի կերպով: Տնօրէնը՝ Ֆարկօ՛ շատ զարգած էր երբ ծառան հշանաւոր գաղտնի ստիկանին այցարարը բերած էր իրեն:

— Ողջո՞յն Մը, Փինքէրթըն, ըստ: Հաճեցէք նոսիլ: Ասու գիւ շատ հատաքրքիր եմ դիտնալու թէ ի՞նչ պատճառ եկած էք հոս:

— Շատ տիտուր պատճառի մը շամար, պատախանեց

գաղանի սոտիկաննը : Անշուշտ չեք զիտեր տակաւին թէ երկու ժամ առաջ, Բիել Մառլի տունին մօտ, Հըսպնէն հասնեցին ձեր թատրոնին մէկ նորատի դերասանուհին՝ Օր. Տօլլի Տօրլընի դիակը :

Տնօրէնը վեր վերցուց թեւերը :

— Ահաւասիկ լուր մը, պոռաց: Մեծդ Աստուած, կարելի՞ բան է: Այդ խեղճ Տօլլին, այնչափ նորատի, այնչափ գեղանի ու այնչափ կենութից: Եւ ասոր հետ մէկտեղ այնչափ գեղեցիկ տաղանդ մը: Ի՞նչ կորուստ, Մր. Փինքէրթըն, Բնէ կորուստ արուեստին ... և մեր թատրոնին համար ... Բայց ի՞նչպէս կրցած է պատահիլ առիկա:

— Կը կարծուի թէ կամովին անձնասպան եղած է: Բայց առիկա խիստ որոշ կերպով հաստատուած չէ տակաւին: Ասոր համար եկած եք հոս:

Փինքէրթըն Հըսպնի եղերքներուն վրայ պատահած դէպքը պատմեց տնօրէնին, խնդրելով անկէ առժամապէս բան չըսէլ մէկու մը թէ ոճիր մը դործուած էր և ո՞չ թէ անձնասպանութիւն մը:

— Հիմա, շարունակեց, կ'ուզէի քանի մը հարցումներ ընել ձեզի:

— Բոլորովին ձեր արամադրութեան տակ եմ:

— Տեսնենք ... նախ և առաջ, երբ խնդրի եղան պաշտօն յանձնել Օր. Տօրլընի, չփորձեցին արդիւկ այս յանձնառութիւնը:

— Արդարեւ փորձեցին, պատառխանեց անօրէնը բոլորովին զարմացած: Ինչէ՞ն դիտէիք ասիկա ... Քանի մը անառուն նամակներ ստացայ, որնցմով կը ծանուցուեր իսծի որ եթէ Օր. Տօրլընի հետ յանձնառութիւն կնքէի, քիչ տաենէն դժբախտութիւն մը պիտի պատահէր:

— Այդ նամակները տակաւին ձեր քո՞վ են:

— Այս, և ձեր արամադրութեան տակ կը դնեմ եթէ կրնան օգտակար ըլլալ ձեզի:

— Ցոյց տռւէք:

Տնօրէնը իր գրասեղանին մէկ դարակէն քանի մը նաև մակներ առաւ և այցելուին երկնցուց: Ակնարկ մը բաւական եղաւ Փինքէրթընի համար թէ այդ նամակներուն դիրք ծշտիւ կը նմանէր մեռեալին ձեռքի պայտասակին մէջ դժոնուած նամակին դիրերուն:

— Անձնապէս, ուզգակի կերպով մէկը միջամտեց փորձելու համար որ հրաժարիք այդ յանձնառութիւնը կնքելէ, հարցուց ֆարկոյի:

— Ո՞հ, կատղիլը բան մը չէր ...: Սյու իրողութեան պատճառաւ կորմացուցի ամէնէն հաւատարիմ յաճախորդներէս մէկը, Մր. ձէյմս Միլթըն, որ օղեակ մը վարձած էր: Քաղաքին ամէնէն հարուստ և ամէնէն յարգելի գործարանատէրէն մէկն է: Օր մը եկաւ գտաւ զիս և յայտարարից թէ այն ազգիկը, որուն հետ կ'ուզէի պայմանաւորութիւն, Եթւ Եօրքի մէջ զէշ համբաւ մը կը վայելէր ... , թէ կը խնդրէր ինձմէ զայն իր տեղը թողուլ, թէ Ալպանիի բարձր դասակարգը չէր հանդուրժեր բեմին վրայ տեմնել այդ կարգի արարած մը ... մէկ խօսքով, քննափետութիւն մը, մազերու ծերմկցնելու առարձան: Անշուշտ կարեւորութիւն չտուի այս խօսքերուն, վասնզի գիտէի թէ Տօլլի տաղմնդաւոր արուեստագիտուհի մըն է և երբեք գէշ բան մը լսած չէր իր վարքուբարքին վրայ: Այն ատեն այդ պարոնը զայրացաւ, բաւանորդութեան պայմանալբութիւնը խզեց և իր բարեկամներէն մէկ քանին ալ համոզեց որ այնպէս ընեն: Արդէն անսնք մտիկ չըրին: Եւ յետոյ, անկիզծօրէն ըսկով, տակաւին հասած չենք այն վիճակին որ սա կամ նա անձին հաւանութիւնը խնդրէնք երբ օղատիար կը տեսնենք զերանի մը հետ պայմանաւորութիւն:

Փինքէրթըն դժուարաւ զոպեց ուբախութեան սառուռ մը, ձէյմս Միլթընի անունը լսելով: Վերջապէս զիտէր թէ ո՞ւր գտնելու էր յանցաւորը: Սյու եւս ուրիշ հարցում տաւաւ անկէ և Օթէլ Պրիսթու զնաց կառըով:

Հոն գտաւ Հէրրի Օ' Նեյլը, որ իրեն կ'ոպատէր անհամբերութեամբ և որ անձկալից ծախտավ մը բնալունց իր գալուալք:

— Բայն մը գտա՞ք, հարցուց բարի Իրլանտացին, անկարութ ըլլալով զապել իր հետաքրքրութիւնը:

Փինքէրթըն թիկնաթուի մը վրայ նստաւ և սիկտ մը վառեց:

— Մր. ձէյմս Միլթընը կը ճանչնա՞ք, ըստ իրրեւ պատասխան:

— ձէյմս Միլթըն, գործարանատէրը, միլիոնատէրը:

— Ես'յն ինքը:

— Հա՞րկաւ կը ճանչնամ ։ Նոյնիսկ բարեկամներէս մին է ։
— Մտերի՞մ։
— Ո՞չ ։ Միլթըն մտերիմ բարեկամ եղող մարդ չէ ։
Քանի մը անգամ գտնուած եմ իր երեկոյթներուն, ինչպէս
որ ան ալ եկած է իմ երեկոյթներուն։ Զբոսառէր մըն է,
բայց կ'զգուշանոյ Արտասիր մէջ զբոսնելէ։ Կ'ուզէ իր
համբաւը պահել։

— Լա՛ւ ։ Հիմա, սիրելիս 0' նէլլ, եթէ ինդրանք մը
ընեմ կ'ընդունի՞ք։

— Հա՞րկաւ ։ Ի՞նչ պէտք է ընեմ ձեզի ծառայելու համար։

— Կ'ուզէի որ վաղը պղտիկ երեկոյթ մը ուայիք, որուն
հրատիքի Մր. Միլթընը։

Ագարակատէրը զարժանք յայտնեց։

— Սիրով պիտի ընեմ ձեր ըսածը եթէ, կրնայ հաճելի
ըլլալ ձեզի, ըստ։ Բայց չեմ հասկնար ։

— Վաղ իրիկուն պիտի հասկնաք, աղնիւ բարեկամու։
Առ այժմ մեծ հաճոյք պիտի պատճառէք ինձի եթէ այլեւս
բան մը չնարցնէք ։ Հետազօտութիւններու պիտի չարու-
նակեմ, բայց ամենամեծ գաղտնապահութեան պէտք ունիմ։
Կ'ուզեմ բախտը փորձել վաղը, ունեցած բոլոր դրամովս
խաղաղ քույայի մը մէջ նետուածքին վրայ և կը նախզդամ
թէ պիտի յաջողիմ։

— Կը սիրեմ յուսալ թէ ձեւմս Միլթընին վրայ չէք
կառկածիր, ըստ 0' նէլլ, ապշանար։ Ասիկիս բացարձակա-
պէս սխալ ճամբէ երթալ պիտի ըլլար։ Առաջուընէ կ'իմա-
ցնեմ ձեզի, Մր. Փինքէրթըն։ Ամբողջ քաղաքին մէջ յար-
գուած ու մեծարուած այդ պարկեցած մարդը ո՛ և է կերպով
մաս ունեցած չի կընար ըլլալ մեղ զբաղեցնող անոելի
ոճիրին մէջ։

Նաթ Փինքէրթըն ուսերը թոփուեց։

— Ես բան մը շրաի, պատափանեց։ Ամէն պարագայի
մէջ վաղ իրիկուն ձեր տունը պիտի վամ իրեւ բարեկամ և
ո՛չ թէ իրեւ գաղտնի ոստիկան և գուք ձեր հիւրերուն
պիտի ներկայացնէք զիս իրեւ մէկը, որ ոինէմայի գործով
կ'զբաղի իրեւ (ամաթէօռ)։ Կը հաճի՞ք հեռածայնել այդ
ձէյմն Միլթընին, ապահով ըլլալու համար թէ պիտի վայ
ձեր երեկոյթին։

— Ամենայն սիրով, պատափանեց ագարակատէրը։ որ
համարձակիցաւ ըսել իր բարեկամին թէ շատ այլանդակ կը
գտնէր այս առաջարկը։

Յարակից սենեակ մը գնաց, ուր կը գտնուէր հեռա-
ձայնը և քանի մը վայրկանէն գարձաւ։

— Հեռաձայնեցի, ըստ։ ձէյմս Միլթըն կը ծանուցանէ
բնծի թէ պիտի դայ և ամենամեծ հաճոյքով։ Բաւական ծանր
կերպով հիւանդացեր է և այս վերջին ամսուան միջոցին
սենեակէն դարս չէ ելեր։ Բայց հիմա գրեթէ առողջացած
է։ Կը յուսայ թէ բաւական աղէկ պիտի ըլլայ և վաղը դա-
րով հաճելի երեկոյթ մը պիտի անցընէ։

Փինքէրթըն ագարակատէրին մաֆիկ կ'ընէր ժպտելով։

— Համոզումն կը հաստատուի կ'ընէր ինքնիրեն։ ձէյմս
Միլթըն հիւանդ է ամիսէ մը ի վեր, այսինքն ճիշտ այնչափ
ժումանակ որչափ սա խեղճ Տօլլին անցուցած է Արտանի
քաղաքին մէջ։ Անիկա այսօր իսկ մեռած է և ահա ձէյմս
Միլթըն մէկէն ի մէկ յարաթիւն կ'առնէ։ Ասիկա ինծի հա-
մար խիստ շահագրգռական է, բայց ճշշգը ըսելով, ես այս
միլիոնատէրէն աւելի շարամիա ոճրագործներ ճանչցած եմ։

Ոտքի ելաւ։

— Մեկնինք հիմա, 0' նէլլ, ըստ բարի իրլանտացիին։
Տակաւին կարեւոր այցելութիւն մը ունիմ ընելիք։

Փողոց իջան և նոր կառաք մը վարձեցին։ Գաղանի սա-
տիկանը կառապանին հրամայեց երթալ մեծ լուսանկարի մը
ուսուած, որ սինէմայի երիշներու պատրաստութեամբ ալ կ'ը-
րագէր։

Երկար տեսակցութիւն մը ունեցաւ լուսանկարին հետ
ու բաժնուած պահուն, անիկա ըստ ձեռքի սիրալիք
ուղամումով մը։

— Որոշուած է Մր. Փինքէրթըն։ Ժամը ճիշտ նին իմ
մարզիկու Բիէռ Մարլի տան առջեւ պիտի գտնուին հարկ
եղած բոլոր իրեկէններով։

— Լա՛ւ ։ Ես ալ հսն պիտի գտնուիմ օկնականներուն
հետ մէկտեղ։

Գաղանի սատիկանը 0' նէլլի միացաւ կառքէն մէջ։ Ի-
բիկան թերթ ծախողները փողոցներուն մէջ կը վաղը բա-
տէին, ապագրական մելանը տակաւին թաց եղող լրագիր-

ները շարժելով և առաջին էջերուն վրայ գտնուած խոչոր խորագիրները ցոյց տալով :

— Փստոեցէք վերջին լուրե՛րը ... եղերական դէպք մը ... թէաթո. Մէթրօօլի հանրածանօթ դերասանուհին՝ Օր. Տօլլի Տօրլընի անձնասպանութիւնը ...

— Կը աեսնէք, Օ՞նէլլ, ըստ Փինքէրթըն: Դատական պաշտօնեան ստուգիւ եղբակացուցեր է թէ խեղճ աղջիկը անձնասպան եղած է: Արդէն կ'սպասէի ասոր: Բայց կը յուսամ թէ վաղը դատական պաշտօնեայ և երդուեալ դատաւորներ պիտի կորսնցնեն այս պատրանքը:

Թողոց որ Օ՞նէլլ առանձին դասնայ իր աղարակը, հակառակ անոր պնդումին՝ իրեն հետ առնելու համար դազնի ոտտիկանը: Այս վերջինը օթէլ դարձաւ, հոն սպասելու համար իր օդնականին՝ Մօրիոընի, որ անշուշտ դիշերուան առաջին կառախումբով պիտի դար:

ԵՐԻՍԱՀ ԿՍՐԻ ՄԸ ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆԸ

Եթէ դիսող մը յաջորդ առուու գտնուեր Բիէս. Մարդի ունն մէջ, պիտի ապշէք մնար իր աչքին պարզուելիք անտկալ ահամարանին առջեւ:

Նաթ Փինքէրթըն առառուան ժամը նէն ի վեր Մարդի ուննը կը գտնուեր իր օգնական Մօրիոընին հետ, որ կէս դիշերին եկած էր Մըլպանի:

Մօրիոըն շահեկան լուր մը կը բերէր. Դերասանուհի իրմա նէթէրլէնտի մօտ դացած և իմացած էր անկէ թէ Տօլլի գեղարուեստական կրթութեան համար շատ ուղ գին մը վճարուած էր իրեն:

Աղջիկը ամէն ամիս կանոնաւորաբար կը յանձնէր իրենց միջեւ որոշուած դամարը և նէթէրլէնտ միշտ կարծած էր թէ Տօլլի հասոյթի աղբիւրներ ունէր:

Նաթ Փինքէրթըն ուրախ էր որ դէպքերը հետպհեաէ կը հուստատէին իր ենթաղրութիւնները:

Երբ Բիէս. Մարդի ուննը հասան, երկու դաղսնի սոտիւ կանները իրենց ուտքէն մինչեւ գլուխը այլափոխուած էին: Մօրիոըն, որ բարձրահասակ և ուժեղ ըլլալուն հակառակ նուրբ և վայելուչ ձեւեր տնէր, կիբիւրակներով զարդար-

ուած կապոյտ շրջազգեստ մը հագաւ, ոսկեդոյն առատ կեղծում մը և փեարազարդ նորածեւ գլխարկ մը դրաւ գլուխը: Յետոյ շպարի և բրնձափոշի միջոցաւ կնոջական ոքանչելի դէմք մը շինեց:

— Տէ՛ր Աստուած, պատաց ծերունի Մարլ, որ հետաքրքրութեամբ կը հետեւէր այս բոլոր պատրաստութիւններուն, չուրի երկու կաթիւներու պէս կը նմանիք այն խեղճ կնոջ, որ գետին մէջ խեղդուեցաւ: Զեւ, ըրածը հիանալի բան է:

Փինքէրթըն ալ վայելուչ պատոնի մը պէս հագուած էր: Աեւ կեղծում մը և համագոյն խիտ մօրուք մը դրած էր: Յետ Մօրիարնի երկնցներով ձէյմս Միլթընի մէկ լուսանկարը, զոր կրցած էր հայթայթել Հէրրի Օ՞նէլլի միջոցաւ, հարցուց:

— Կը նմանի՞մ:

— Խարուելու աստիճան, վա՛րպես:

— Լա՛ւ, ուրեմն զործի սկանք: Լուսանկարիչները գուրար մեզի կը սպասեն արդէն: Մօրիարն, գետին մէջ լուգանք մը ընելու պատրաստուէ:

Տունէն զուրս ելան և սեմին վրայ դտան երկու պառններ, որոնք մէյմէկ լուսանկարչական գործիք կը կրէին: Ամէնքը միատեղ նաւակով մը մեկնեցան և գետն ի վեր ելան մընչեւ կոր զիժէն անդին գտնուած մաս մը: Հօն, լուսանկարիչները ցամաք ելան և երկու գաղտնի ոստիկանները նաւակին մէջ ձգելով, պատրաստուեցան բոլորովին մասնաւոր տեսակ պատկերներ առնել...

Այդ օրուան իրիկունը, սակաւաթիւ բայց ընտրեալ ընկերութիւն մը հաւաքուած էր հարտաս աղարակատէր Օ՞նէլլի առնը: ձէյմս Միլթըն ալ մէջն էր: Փինքէրթըն Օ՞նէլլի կոզմէ ներկայացուած էր Մը. Թօմաս Քրուք անունով, աղարակատէր Արեւմուտքի մէջ: Մօրիոըն առժամապէս անտեսնելի էր:

Պատուական ճաշէ մը եաք, Օ՞նէլլ իմացուց իր հրաւիրեալներուն թէ Մը. Թօմաս Քրուք, որ շատ կը զբաղէր սինէմայով, հաճութիւնը ունեցած էր իր զործիքը բերելու և թէ պզտիկ ներկայացում մը պիտի տար: Այս լուրը ուրախութեամբ ընդունուեցաւ և բոլոր ներկաները զացին պզտիկ

սրան մը , ուր լուսաւոր վարագոյրը պատրաստուած էր արդին և աթոռներ շարուած էին հանդիսականներուն համար :

Ճէյմս Միլթըն խիստ գեղեցիկ և պչրող կնոջ մը քով , որուն հետ սիրաբանութեան սկսաւ , օգտուելով այս պարագայէն որ տիկին Միլթըն , իր օրինաւոր ամռասինը , քանի մը օրերէ ի վեր չերժուեները զացած ըլլալով , հոն չէր գտնաւէր իր վրայ հսկելու համար : Փինքէրթըն անոր քովը նստաւ :

Ներկայացման նիւթը կը ծանուցանէր , քանի պատկերները կ'երեւային լուսաւոր վարագոյրին վրայ :

— Ելլովաթըն Բարքին մէջէն արշաւ մը ձեւպընթացով .

— Արջառի բհանաւորում Լոնտոն երթալիք շոգենաւի մը մէջ .

— Օդապարիկի վերելը մը Մէյնթ Լուիսի մէջ . — Մարտա-

նաւերու մարզանքներ . . .

Յետոյ , վերջապէս , յայտարարեց , ներկաներուն գոհա-

նակ մրժունչներուն մէջտեղ .

— Իբրև վերջաբան , Տիկնայք և Տեարք , կը ներկա-

յացնեմ զարհուրելի ոճիր մը , որուն բոլոր մանրամասնու-

թիւնները կատարելապէս ճիշդ են :

Վարագոյրին վրայ երեւցաւ գետ մը , որ իր ջուրերը

հանդարտօրէն կը հոսեցնէր մացաններով ծածկուած եղերք-

ներուն միջեւ : Յետոյ ոեւ ու խիստ մօրուքով մարդ մը հե-

ռացաւ մացաններէն . . . Ծոեցաւ և չորս կողմը նայեցաւ ,

գետէն վար և վեր :

Հրաւիրեախները զիրար կ'արմէին , փոփսալով : Մարդը

ուշագրաւ կերպով կը նմանէր Ճէյմս Միլթընի . . . Այս

վերջինը սառառաց , քովը նստող կնոջ հետ իր սիրային խօ-

սակցութիւնը ընդմիջեց և մոլորուն նայուածքը սեւեռեց

վարագոյրին վրայ :

Պատկերը հիմա ցոյց կաւար կին մը , որ գետն ի վեր

կուդար նաւակով մը :

Մարդը նշան մը բրաւ այդ կնոջ , որ իր հաւուն ցռուկը

գէպի եղերք դարձուց ու ոեւ մօրուքով մարդը ցատկեց

իրեն քով . . .

Փինքէրթըն կը դիտէր Ճէյմս Միլթընը , որ ծանրօրէն

կը չնջէր , աչքերը մոլորուն , ճակատը քրտինքով ծածկուած :

... Նաւակը դարձեալ հեռացաւ եղերքէն : Մօրու-

քոր մարդը կը խօսէր կնոջ հետ : Քիչ քիչ անհամբերութիւն

ցոյց տուաւ , գրգռուեցաւ , յետոյ նետուեցաւ սարարախու կնոջ վրայ նաւելն դուրս նետելու համար զայն : Կինը յու-

սահատօրէն կը պայքարէր , իր վրայ յարձակողին կառչելով :

Ճէյմս Միլթըն սուքի ելաւ : Զարհուրանքի և սոսկումի հանդիւն մը կը խեղզուեր կոկորդին մէջ :

Այս տեսաբանը ձեղի բնաւնի եղած ըլլալու է , Մր.

Հերլաւ Պլոք , այնպէս չէ , ըստ գաղտնի սատիկանը ձեռքը

անոր սւսին վրայ զնելով :

Միլթինատէրը բոլոր մարմինովը կը թողար , փոփսակի նայելով գաղտնի սատիկանին և պատկերին , որ միշտ կը յառաջանար լու սաւոր վարագոյրին վրայ :

... Կինը , որ ջուրը ինկած էր հիմա , նաւակին եղեր-

քին կառչած էր : Յայց թշուառական վատը , որ անոր մեռ-

նիլը կ'ագէր , թիակի հարուածներով կը զարնէր անոր բա-

րիպելու համար որ թոգու նաւակը . . .

— Մր . Ճէյմս Միլթըն , շարունակեց գաղտնի սատիկա-

նին ծանր ձայնը , կը խոստովանի՞ք թէ այս կերպով սպան-

նուծ էր երիտասարդ գերասանունի Տօլլի Տօրլընի , որուն

հետ գաղտնապէս ամուսնացած էիք :

Միլթինատէրը , որ ուժապառ եղած էր , ինկաւ աթոռին վրայ և ձեռքերովը ծածկուեց երեսը :

— Ամէն բան կը խոստովանիմ , ըստ խուլ ձայնով մը :

Այս՝ սպաննեցի այդ բարեհամբոյր արարածը . . . Յայց , յա-

նուն Աստուծոյ , զիթացէ՞ք ինծի , վերցուցէ՞ք սա անսելի

պատկերը :

Փինքէրթընի մէկ նշանին վրայ , Մօրիսըն կեցուց սինէ-
ման : Պատկերը անհետացաւ : Այս ատեն գաղտնի սատիկանը
մօտեցաւ Ճէյմս Միլթընի և ձեռնակալ դրաւ : Յետոյ տու-
նէն մեկնեցաւ իր օգնականին և կալանաւորին հետ , զոր
ադարակին դրան առջեւ սպասող կառքի մը մէջ դրաւ և
ուղարկի Ալպանիի բանուը տարաւ զայն :

Քանի մը շաբաթ վերջ , զգայացունց գատավաբութիւնէ
մը ետք , միլթինատէրը իր գարշերի ոճրին գինը կը հատու-
ցանէր ընկերութեան : Ոչ իր միլթինները , ոչ իր զգչումը
չկրցան փրկել զինք կարավնատէն , ուր հոգին աւանդեց
ներում ինդրելով Աստուծմէ , կեանքը այդքան գէշ կերպով
գործածած ըլլալուն համար :

Այս դէպքը ոչ նուազ նպաստեց Նաթ Փինքէրթընի համբաւին։ Առաջուրնէ աւելի անոր զբասենեակը դիմել սկսան ամէն տեսակ յաճախորդներ, բայց մանաւանդ այն բազմաթիւ անձերը, որոնք սովորական ոստիկանութեան դիմելով գոհացում գտնելէ յուսահատած էին։

ՎԵՐՋ

ՅԱԶՈՐԴ ԹԻՒՈՎ

ՄԱՐԴԱՄՊԱՆՆԵՐՈՒ ԴԱՏԱՊԱՐՏԵԱԼԸ



910

ՀՀ Ազգային գրադարան



NL1007227 7

ՀՀ Ազգային գրադարան



NL1007226 6

ՀՀ Ազգային գրադարան



NL1007225 5

ՀՀ Ազգային գրադարան



NL1007224 4

ՀՀ Ազգային գրադարան



NL1007223 3

ՀՀ Ազգային գրադարան



NL1007017 2

ՀՀ Ազգային գրադարան



NL0933053 1

ՀՀ Ազգային գրադարան

 NL1007238 18

ՀՀ Ազգային գրադարան

 NL1007237 17

ՀՀ Ազգային գրադարան

 NL1007236 16

ՀՀ Ազգային գրադարան

 NL1007235 15

ՀՀ Ազգային գրադարան

 NL1007234 14

ՀՀ Ազգային գրադարան

 NL1007233 13

ՀՀ Ազգային գրադարան

 NL1007232 12

ՀՀ Ազգային գրադարան

 NL1007231 11

ՀՀ Ազգային գրադարան

 NL1007230 10

ՀՀ Ազգային գրադարան

 NL1007229 9

ՀՀ Ազգային գրադարան

 NL1007228 8

ՀՀ Ազգային գրադարան

 NL1007241 21

ՀՀ Ազգային գրադարան

 NL1007240 20

ՀՀ Ազգային գրադարան

 NL1007239 19

